ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՏՆՕՐԵՆԻՆ

13.03.2014 11:09

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը հանդիպել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրեն Արտաշես Ջավադյանին

Արտաշես Ջավադյանի ուղեկցությամբ Արա Զոհրաբյանը շրջայց է կատարել Բյուրոյի տարածքում, ծանոթացել կառույցի աշխատանքներին, ինչպես նաև փորձաքննություն իրականացնող բաժինների գործունեությանը:

Հանդիպման ընթացքում Արտաշես Ջավադյանը Արա Զոհրաբյանին ներկայացրել է կառույցի գործառույթները և գործունեության ոլորտները: Կողմերը համագործակցության պատրաստակամություն են հայտնել և քննարկել են փաստաբանների համար «Փորձաքննությունների ազգային բյուրո»-ի մատուցած ծառայությունների մատչելիության հարցը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })